խնամիական կապերով, այնպէս որ քիւրդն ու հայը պիտի կարողանային աղջիկ տալ ու առնուլ, առանց կրօնի ու ցեղի խտրութեան, առ այժմ ամեն մէկը պահելով իր կրօնի ու ցեղի ազատութիւնը։ (*)

Պարսիկ իշխանութեան արդէն իրենք ձիւնարկել էին դիմել, Մէլիքզատեան անուն պարսկաստանցի հայու մը միջոցով՝ որուն մէկ եղբայրը Շահի պալատականներէն էր (**)։

Պէտիրխանը և առաջադրած էր կ'ըսեն, զինարան մը հիմնել իր իշխանութեան մէջ, և ադոր համար կ'ուզէր ար-

(*) Դոքտ. Լէփսիուսի «Տէր Քրիստիխէ Օրիէնդ» (Քրիստոնէական Արևելքը) 1904 Նոյ. ամսաթերթի մէջ կը գտնենք հետևեալ տեսութիւնները «Քիւրդեր և Հայեր» վերնագրին տակ։

«Անցած դարուն մինչև քառասնական թուականներուն վերջը՝ Փոքր-Ասիոյ այլ և այլ գաւառներու վրայ Սուլթանի իշխանութիւնը պարզ անուանական էր. իրականին մէջ՝ երկիրը զանազան իշխաններուն և բէգերուն կը վերաբերէր, որոնք տարուէ տարի Սուլթանի գանձուն որոշ տուրք մը կը հատուցանէին, բայց իրենց երկրին վրայ իշխանութիւնը անձամբ վարելով։

Զինուորական ծառայութեան պարտաւորեալ չէին, սակայն ի հարկին Սուլթանը կրնար ասոնցմէ օգնական գունդեր խնդրել, և այս պարագային՝ իրենք պարտաւորեալ կ'ըլլային որոշ թիւով զինուոր տալու։

Պատահած է որ այս իշխանները և բէգերը իրենց իշխանութեանը Սուլթանին կողմէն սպառնալիք եղած միջոցին կը միանային և հասարակաց ուժով Սուլթանական իշխանութեան դէմ կ'ըմբոստանային։ Իսկ Հայկական գաւառները Քիւրդական իշխաններու ձեռքով կը կառավարուէին որդւոց որդի։ Այսպէս՝ Պայազիտ և Ալաշկերտ՝ Պահլիւլ փաշային կը պատկանէին, Պիթլիս և Տիարպէքիր՝ Պէտիր-խան պէյին և այլն։

Մինչև 1848ը Հայերու և Քիւրդերու յարաբերութիւնները շատ բարեկամական էին, Քիւրդերու և Հայոց մէջ ամուսնութիւնները ցանցառ չէին։ Այն պարագային՝ պսակը Հայոց եկեղեցւոյ մէջ հայ քահանայէն կը կատարուէր, Քիւրդերը հայկական սրբութեանց և հոգևորականութեան հանդէպ մեծ յարգանք կը տածէին. իրենց աղօթքը Հայ եկեղեցւոյ մէջ կը կատարէին։»

Կը յիշատակէ Սուլթան Մէճիտի քրդական բէգերու հետ մերձեցումն առաջ բերելը դիւանագիտական միջոցներով, ու յետոյ Պէտիր-խանի վրայի արշաւանքը, որմէ յետոյ Պայազիտի Պահլիւլ փաշային և կալանաւորումը ու փոքր-Ասիոյ քաղաքներէն մէկի մէջ աքսորումը։

(**) Մելիքզատեանի մասին տես մեր «Վանկուլիները»։